ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀՀ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ *

ՀՏԴ 330.3 *DOI: 10.52063/25792652-2023.1.16-148*

ՍՈՒՐԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Հայաստանի Հանրապետության Կրթության տեսչական մարմնի
հանրակրթության վարչության պետ,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
Suren-avetisyan@mail.ru
ORCID: 0009-0008-9519-3103

ՎԱՐԴՈՒՇ ԳՅՈԶԱԼՅԱՆ
Երևանի պետական համալսարանի
Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
vardushgyozalyan@ysu.am
ORCID: 0009-0009-7876-7651

Հոդվածի շրջանակում իրականացված վերլուծության նպատակն է վեր հանել ՀՀ նախադպրոցական կրթության ոլորտում առկա հիմնախնդիրները, որոնք մարտահրավերային են սոցիալական արդարության խաթարման տեսանկյունից: Խնդիր է դրվել ներկայացնել այս ոլորտում սոցիալական արդարության բովանդակային շրջանակները, պետական ֆինանսավորման և ներդրումների ազդեցությունը հասարակության երկարաժամկետ զարգացման վրա, ինչպես նաև բացահայտել ՀՀ նախադպրոցական կրթության ոլորտի հիմնական սոցիալական խնդիրները:

Հետազոտության շրջանակում կիրառվել են գիտական աբստրահման և ինդուկցիայի, վիճակագրական վերլուծության և ժամանակագրական շարքերի դիտարկման, համեմատական վերլուծության մեթոդները: Մասնավորապես, հիմնվելով Սոցիալական արդարության համաթվի հաշվարկման մեթոդաբանության վրա՝ համեմատել ենք ՀՀ և ՏՀԶԿ երկրների նախադպրոցական կրթության ֆինանսավորման ծավալները (որպես ՀՆԱ-ի տոկոս)՝ որպես սոցիալական արդարության ապահովման հենքային ցուցիչ:

Հետազոտության արդյունքում պարզ է դարձել, որ չնայած ոլորտին հատկացվող միջոցների բացարձակ աճին՝ ՀՀ-ում դրանց կշիռը ՀՆԱ-ի մեջ ՏՀԶԿ երկրների համեմատ ցածր է, ավելին՝ դրսևորում է նվազման միտումներ: Արդյունքում խիստ ցածր է կրթության այս օղակում երեխաների ներգրավվածության մակարդակը. համապատասխան տարիքի երեխաների շուրջ 2/3-ը զրկված է նախադպրոցական կրթություն ստանալու հնարավորությունից. 1.5-3 տարեկան երեխաների ընդամենը 6.2 տոկոսն է

* Հոդվածը ներկայացվել է 07.03.2023թ., գրախոսվել՝ 17.03.2023թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2023թ.:

հաճախում մանկապարտեզ, իսկ գյուղական բնակավայրերում երեխաների շուրջ ¾-ը դուրս է մնում նախադպրոցական կրթությունից:

Հետևապես, սոցիալական արդարության սկզբունքի իրացման տեսանկյունից անկյունաքարային է ֆինանսավորման հարաբերական ցուցանիշի շարունակական աճը՝ միտված առաջին հերթին բոլոր ուղղություններով (տարածքային, ենթատարիքային և այլն) երեխաների ընդգրկվածության ցուցանիշի բարելավմանը:

Հիմնաբառեր՝ *սոցիալական արդարություն, նախադպրոցական կրթություն, նախադպրոցական հաստատություններ, նախադպրոցական կրթության հասանելիություն, նախադպրոցական կրթության պետական ֆինանսավորում, սոցիալական արդարության համաթիվ, երկարաժամկետ զարգացում:*

Նախաբան

Սկսած Արիստոտելի և Պլատոնի ժամանակներից՝ գիտական միտքը ծնունդ է տվել արդարության վերաբերյալ տարբեր տեսությունների ու մոտեցումների, սակայն այսօր էլ արդարության հիմնախնդիրը շարունակում է մնալ տարբեր գիտական հոսանքների ուսումնասիրության առանցքում՝ հաշվի առնելով հասարակության զարգացման մշտապես փոփոխվող գործոններն ու մարտահրավերները:

Ի տարբերություն արդարության, «սոցիալական արդարություն» եզրույթը, որպես այդպիսին, ընդամենը 20-րդ դարի ծնունդ է[1]: Մեծ հաշվով, այն ուղղակիորեն բխում է արդարության օբյեկտիվ անհրաժեշտության միաժամանակ երկու պայմաններից՝ ռեսուրսների սահմանափակություն և կոնֆլիկտի առկայություն (Хёффе, О 34-36): Այլ կերպ ասած, սոցիալական արդարության նկատմամբ պահանջարկը ձևավորվում է այնտեղ, որտեղ սահմանափակ ռեսուրսներով թողարկված բարիքները հասարակության տարբեր խմբերի միջև բաշխվում են այնպես, որ այդպիսի բաշխման արդարացիության վերաբերյալ մոտեցումները տարամիտվում են՝ առաջացնելով կոնֆլիկտ: Իսկ քանի որ բաշխման հարաբերություններում այդպիսի կոնֆլիկտներն անխուսափելի են, ապա օբյեկտիվորեն ձևավորվում է բարիքների (եկամուտների) վերաբաշխման անհրաժեշտություն: Այնպիսի վերաբաշխումը, որը կարող է չեզոքացնել կամ մեղմել կոֆլիկտայնության մակարդակը, թերևս կարող ենք համարել սոցիալապես արդար:

Տարբեր հեղինակավոր միջազգային կազմակերպություններ այսօր ներկայացնում են սոցիալական արդարության իրենց բնորոշումն ու տեսլականը: Օրինակ, ըստ ՄԱԿ-ի սահմանման՝ սոցիալական արդարությունը տնտեսական աճի պտուղների արդարացի բաշխումն է (“Social Justice in an Open World…” 7): Այն պետք է ապահովի անվտանգ և հաճելի միջավայրից բոլոր մարդկանց օգուտ ստանալու իրավունքի լիարժեք իրացումը:

Նախադպրոցական կրթության ոլորտում սոցիալական արդարությունը առաջին հերթին ենթադրում է այնպիսի միջավայրի ապահովում, որտեղ ընտանիքների մեկնարկային սոցիալ-տնտեսական, մշակութային, արժեհամակարգային և այլ բնութագրիչների ազդեցությունը երեխաների նախադպրոցական կրթության հասանելիության և որակյալ իրացման վրա չեզոքացված է կամ հասցված է նվազագույնի: Այլ կերպ ասած, նախադպրոցական կրթությունը, որպես

[1] Առաջին հիմնարար աշխատությունը, որտեղ սոցիալական արդարությունն իր բովանդակային շրջանակներն է ձևավորում, կարելի է համարել Ֆրիդրիխ ֆոն Հայեկի «Սոցիալական արդարության պատրանքը» (The Mirage of Social Justice, 1976), որտեղ, սակայն, հեղինակը դեմ է արտահայտվում ընդլայնվող սոցիալական քաղաքականությանը՝ կողմնակից լինելով պետության՝ «գիշերային պահակի» կարգավիճակին:

սահմանափակ ռեսուրս, բաշխվում է շահառուների (նախադպրոցական տարիքի երեխաների) միջև այնպես, որ դրանից բխող սոցիալական լարվածության կամ կոնֆլիկտայնության մակարդակը հասարակության շրջանում մինիմալացվում է: Այսպիսի կրթական միջավայր հնարավոր չէ ապահովել առանց պետության առանցքային մակրոգործիքի՝ հասարակական եկամուտների վերաբաշխման: Վերջինս ենթադրում է պետական սոցիալական քաղաքականության հստակ գերակայությունների սահմանում և, ըստ այդմ, պետական ծախսումների համամասնությունների ձևավորում: Այս տեսանկյունից կարևոր է հասկանալ, թե հասարակական զարգացման գործընթացների վրա ինչ երկարաժամկետ ազդեցություն կարող է ունենալ որակյալ նախադպրոցական կրթությունը, և ոլորտին ուղղվող պետական միջոցներն ու ներդրումները որքանով են բավարար կրթական այս ծառայության հասանելիության խնդիրի լուծման համար:

Նախադպրոցական կրթության մեջ ներդրումների ազդեցությունը երկարաժամկետ հասարակական զարգացումների վրա

Բազմաթիվ տեսական և էմպիրիկ հետազոտությունների արդյունքները վկայում են մարդկային կապիտալի կուտակման վրա նախադպրոցական կրթության զգալի ազդեցության մասին: Կունյայի և Հեկմանի մշակած, այսպես կոչված, դինամիկ կոմպլեմենտար մոդելը ցույց է տալիս, որ նախադպրոցական կրթության մեջ ներդրումները նպաստում են ապագայում կրթության մեջ ավելի շատ և ավելի արդյունավետ ներդրումներ անելուն (Cunha, F., and Heckman, J. 31-47): Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն երեխաները, որոնք ԱՄՆ-ում II Համաշխարհային պատերազմի տարիներին հանդիսացել են Լենհեմի Ակտի շրջանակում ֆինանսավորվող երեխաների խնամքի ծրագրի[1] շահառուներ, ապագայում ավելի շատ են ներգրավվել աշխատանքային հարաբերություններում, ունեցել են ավելի բարձր եկամուտներ և սոցիալական ծրագրերից ավելի ցածր կախվածություն, քան նրանք, ովքեր ծնվել են ծրագրի դադարեցումից հետո (Herbst, C.): Մեկ այլ հետազոտության համաձայն՝ 1970-ականներին Նորվեգիայում երեխաների խնամքի և նախադպրոցական կրթության սուբսիդավորման լայնամասշտաբ ընդլայնումը զգալի դրական ազդեցություն է ունեցել մեծահասակ տարիքում նրանց կրթական մակարդակի, աշխատուժի ու զբաղվածության մեջ մասնակցության վրա՝ միաժամանակ կրճատելով սոցիալական ապահովության համակարգից կախվածությունը (Havnes, T. and Mogstad, M.):

Նախադպրոցական կրթության մեջ ներդրումները երկարաժամկետ հատվածում ազդեցություն ունեն նաև հանցագործությունների կրճատման վրա: Նախադպրոցական կրթության ֆինանսավորմանն ուղղված յուրաքանչյուր մեկ դոլարը ապահովում է ապագայում քրեակատարողական հիմնարկների ֆինանսավորման միջոցների 4.5 դոլարի խնայողություն (Գյոզալյան, Վարդուշ, Սոցիալական քաղաքականություն, 271):

Ուսումնասիրությունները փաստում են, որ, օրինակ, ԱՄՆ-ում նախադպրոցական կրթության մեջ երեխաների ներգրավվածության տեսակարար

[1] 1943 թ. հունիսի 29-ին ԱՄՆ սենատի կողմից ընդունված ազգային ծրագիր է (նախատեսված 1940 թ. ընդունված Լենհեմի Ակտով), որով ընդհանուր 20 մլն. դոլար էր հատկացվում այն երեխաների խնամքի և կրթության կազմակերպմանը, որոնց մայրերը պատերազմի տարիներին ներգրավված էին աշխատանքային գործընթացին: Դաշնային կառավարության կողմից սուբսիդավորվում էր նախադպրոցական տարիքի այն երեխաների խնամքի և կրթության կազմակերպումը, որոնք կարող էին զրկվել դրանից՝ կապված պատերազմի հետ: Ծրագիրն իրականացվում էր որպես ռազմական պոտենցիալի ընդլայնման բաղադրիչ խթանելու համար ռազմարդյունաբերության մեջ կանանց ներգրավվածությունը:

կշիռը նվազում է ընտանիքների եկամտային քվանտիլի նվազմանը զուգահեռ: Այլ կերպ ասած՝ ամենացածր եկամուտներ ունեցող ընտանիքների երեխաներն ամենաքիչն են մասնակցում նախադպրոցական կրթության գործընթացին: Ընդ որում, եկամտային գործոնն ամենազդեցիկն է էթնիկ, ռասսայական պատկանելության և այլ գործոնների շարքում (Malik et al, de Brey et al):

Հաշվի առնելով բերված հիմնավորումները՝ կարող ենք պնդել, որ կամայական հասարակությունում նախադպրոցական կրթության ոլորտում շարունակական ներդրումները՝ ուղղված հասարակության բոլոր շերտերի համար դրա հասանելիությանը, հիմնարար նշանակություն ունեն մարդկային կապիտալի երկարաժամկետ որակական կատարելագործման և մրցակցային առավելության ապահովման գործում:

Նախադպրոցական կրթության ֆինանսավորումը՝ սոցիալական արդարության ցուցիչ

Ելնելով սոցիալական արդարության բազմաշերտ ասպեկտներից, ինչպես նաև կայուն զարգացման հայեցակարգում դրա անկյունաքարային նշանակությունից՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) անդամ երկրներում սոցիալական արդարության մակարդակի գնահատման համար մշակվել և ներդրվել է միջազգայնորեն ճանաչված մեթոդաբանություն (Merkel, Wolfgang and Heiko Giebler), որով հաշվարկվում է սոցիալական արդարության համաթիվը (Social Justice Index-SJI): Վերջինս ագրեգացված ցուցանիշ է, որը ներառում է վեց խումբ բաղադրիչներ[1], որոնք, իրենց հերթին, ներառում են 38 քանակական և 8 որակական ենթացուցանիշներ:

Սոցիալական արդարության համաթվի հաշվարկման մեջ կրկնակի կշիռ ունեցող կրթության հասանելիության ցուցիչը բաղկացած է 7 ենթացուցանիշներից[2]: Հատկանշական է, որ կրթական համակարգում սոցիալական արդարության գնահատման շրջանակում առանցքային կարևորություն է տրվում հենց նախադպրոցական կրթության ֆինանսավորման (որպես ՀՆԱ-ի տոկոս) ցուցանիշին, և կրթական մակարդակներից միայն նախադպրոցական կրթությունն է, որ դիտարկվում է ֆինանսավորման տեսանկյունից: Այսպիսի մոտեցումը երիցս վկայում է այն մասին, որ նախադպրոցական կրթության մեջ ներդրումներն ունեն սոցիալապես արդար հասարակության ձևավորման և մարդկային կապիտալի կուտակման մեջ հենքային կարևորություն:

---

[1] Այդ բաղադրիչներն են՝ աղքատության կրճատումը, կրթության հասանելիությունը, աշխատաշուկայում մասնակցությունը, սոցիալական ներառականությունն ու խտրականության բացառումը, միջսերնդային արդարությունը, առողջությունը: Սոցիալական արդարության համաթվի հաշվարկման շրջանակում աղքատության կրճատման ընդհանրական ցուցչին հատկացվում է եռակի կշիռ, կրթության հասանելիության և աշխատաշուկայում մասնակցության ցուցիչներին՝ կրկնակի կշիռ, մյուս ցուցիչները ներառվում են նորմալ կշիռներով:

[2] Այդ ենթացուցանիշներն են՝ կրթական քաղաքականության որակական գնահատականը, PISA թեստի (ՏՀԶԿ երկրներում կիրառվող՝ 15 տարեկանների շրջանում անցկացվող թեստ, որով ստուգվում է նվազագույն գիտելիքների տիրապետման մակարդակը) սոցիալ-տնտեսական ազդեցությունը, PISA թեստի նվազագույն ցուցանիշ ունեցողները (սոցիալ-տնտեսական ազդեցությունը), PISA թեստի նվազագույն ցուցանիշ ունեցողները՝ ըստ բոլոր գնահատվող առարկաների, նախադպրոցական կրթությանն ուղղվող ծախսերը, միջնակարգ կրթություն չունեցողները (25-64 տարիքային խումբ), միջնակարգ կրթություն չունեցող կանանց և տղամարդկանց թվերի հարաբերակցությունը:

Ստորև բերված գծապատկերում ներկայացված են ՏՀՁԿ անդամ երկրները՝ ըստ նախադպրոցական կրթությանն ուղղվող միջոցների (որպես ՀՆԱ-ի տոկոս):



Գծանկար 1. ՏՀՁԿ անդամ երկրներում նախադպրոցական կրթությանն ուղղվող միջոցները (ՀՆԱ-ի տոկոս, 2019)[1]

[1] Գծապատկերը կազմվել է՝ ըստ Սոցիալական արդարության համաթվի վերաբերյալ 2019 թ. հաշվետվության տվյալների (Social Justice in The EU and OECD, Index Report 2019, Thorsten Hellmann, Pia Schmidt, Sascha Matthias Heller, 2019, p.48)

Նախադպրոցական կրթության սոցիալական հիմնախնդիրները ՀՀ-ում

Աղյուսակ 1-ում ներկայացված է ՀՀ նախադպրոցական կրթության ոլորտի հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշների շարժը:

	2016	2017	2018	2019	2020	2021
Նախադպրոցական հաստատությունների թիվը	721	868	884	906	910	957
քաղաքներում	432	451	461	467	471	475
գյուղերում	289	417	423	439	439	482
Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թիվը (1000 երեխա)	72.3	76.4	79.1	82.1	56.1	72.6
քաղաքներում	56.6	58.3	59.9	61.2	41.2	52.8
գյուղերում	15.7	18.1	19.2	20.9	14.9	19.8
Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների տեսակարար կշիռը նույն տարիքի երեխաների ընդհանուր թվաքանակում	28.9	30.9	32.6	34.7	24.3	32.3
քաղաքներում	35.6	36.6	38.0	39.6	28.6	35.6
գյուղերում	17.2	20.6	22.6	25.4	16.2	25.9
Նախադպրոցական կրթությանն ուղղվող բյուջետային ծախսերը՝ ըստ նույն տարվա ՀՀ Բյուջեի մասին օրենքի (հազ. դրամ)	657376.1	746770.5	796136.3	843728.3	922012.8	834147.3
Նախադպրոցական կրթությանն ուղղվող բյուջետային ծախսերը՝ ըստ բյուջեի կատարողականի (փաստացի ծախսեր) (հազ. դրամ)	665546.9	724959.5	778808.4	835050.8	798543	832810.8

Աղյուսակ 1. ՀՀ նախադպրոցական կրթության հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները (2016-2021 թթ.)[1]

Աղյուսակի տվյալները վկայում են, որ նախադպրոցական հաստատությունների թվաքանակը դիտարկվող ժամանակահատվածում յուրաքանչյուր տարի աճել է, սակայն երեխաների ընդգրկվածության ցուցանիշը շարունակում է ոչ գոհացուցիչ լինել:

Մասնավորապես, 2017 թ. նախորդ տարվա համեմատ գյուղերում նախադպրոցական հաստատությունների թիվն աճել է 128-ով, որը կազմում է նախորդ տարի գյուղերում գործող հաստատությունների մոտ 45 տոկոսը, սակայն դա

[1] Աղյուսակը կազմվել է՝ ըստ համապատասխան տարիների ՀՀ վիճակագրական տարեգրքերի (https://www.armstat.am/am/?nid=586), ՀՀ Բյուջեի մասին օրենքների (https://www.gov.am/am/budget/) և Ֆինանսների նախարարության՝ բյուջեի կատարողականի մասին տարեկան հաշվետվությունների (https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/) տվյալների:

ուղեկցվել է գյուղերում երեխաների ընդգրկվածության աճով ընդամենը 3.4 տոկոսային կետով:

2020 թ. հասատատությունների թիվն ավելացել է 4-ով, սակայն շեշտակիորեն կրճատվել է մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը, ինչը պայմանավորված է գլխավորապես նշյալ տարում համավարակի պայմաններում նախադպրոցական հաստատություններում ընդունելության կասեցմամբ: 2021 թ. երեխաների թվաքանակի աճը վերականգնվել է, սակայն դեռ զիջում է նախակովիդյան մակարդակին:

Ինչ վերաբերում է ոլորտին ուղղվող բյուջետային միջոցներին, ապա դրանք բացարձակ մեծությամբ անընդհատորեն աճել են մինչև 2020 թ. և, ըստ Ֆինանսների նախարարության՝ Բյուջեի կատարողականի մասին ամենամյա հաշվետվությունների, էականորեն չեն շեղվել պլանային ցուցանիշներից: Բացառություն է կազմում 2020 թ.-ը, երբ ոլորտի նախատեսվող ֆինանսավորումը նախորդ տարվա համեմատ աճել է շուրջ 9.3 տոկոսով, սակայն փաստացի կատարված ծախսերը կրճատվել են 4.4 տոկոսով: Ըստ Ֆինանսների նախարարության պարզաբանման՝ կրճատումը պայմանավորված է եղել առաջին հերթին երեխաների թվաքանակի նվազմամբ, ինչպես նաև ոլորտի աշխատողների աշխատավարձերի հաշվարկման բանաձևի վերանայումով («Հաշվետվություն ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի…»):

2021 թ. թեև ոլորտի փաստացի ֆինանսավորումը նախորդ տարվա համեմատ աճել է, սակայն զիջում է նախակովիդյան պլանային մակարդակին:

Ոլորտի ամենացցուն և մտահոգիչ խնդիրը շարունակում է մնալ նախադպրոցական կրթության գործընթացում երեխաների ցածր ընդգրկվածությունը: 2021 թ. տվյալներով՝ համապատասխան տարիքային խմբի երեխաների 2/3-ից ավելին զրկված է նախադպրոցական կրթություն ստանալու հնարավորությունից: Գյուղերում այդ ցուցանիշը հասնում է ¾-ի: Հանրապետության 229 բնակավայրերում նախադպրոցական որևէ կրթական ծառայություն չի մատուցվում: Քաղաքային բնակավայրերում նախադպրոցական հաստատությունների սահմանափակ թիվը հանգեցնում է ընդունելության հերթերի, ինչը ևս սահմանափակում է նախադպրոցական կրթության հասանելիությունը:

Ինչպես արդեն նշվեց, նախադպրոցական կրթության ոլորտում սոցիալական արդարության սկզբունքի իրացումը հանգում է ոչ միայն կրթական ծառայության հասանելիությանը, այլև դրա որակյալ իրացմանը: Վերջինս ենթադրում է հետևյալ նպատակների իրականացումը.

ա) երեխայի ֆիզիկական, բարոյական և հոգեկան առողջության պահպանում և ամրապնդում,

բ) նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացում ու դաստիարակություն,

գ) դպրոցական ուսուցմանը նախապատրաստում:

Ըստ ՀՀ Կրթության տեսչական մարմնի կողմից 2020 թ. հանրապետության տարբեր մարզերի ընտրանքային 12 մանկապարտեզներում իրականացված մշտադիտարկման արդյունքների հիման վրա ներկայացված հաշվետվության (http://eib.am)՝ հաստատություններց միայն 3-ն են ամբողջապես հագեցած եղել երեխաների բազմակողմանի զարգացման համար անհրաժեշտ պայմաններով՝ ըստ սահմանված ուղղությունների (երաժշտական գործունեության զարգացում, թատերական գործունեության զարգացում, ֆիզիկական զարգացում, էկոլոգիական կուլտուրայի զարգացում, մարդու, մշակույթի, պատմության մասին երեխաների պատկերացումների զարգացում): Նախադպրոցական հաստատությունների մեծ մասում առկա հագեցվածությունը միայն մասամբ է բավարարել կրթական գործընթացը նշված ուղղություններով որակյալ կազմակերպելու պահանջներին: Հարկ է նշել, որ հագեցվածության առավել ցածր մակարդակը արձանագրվել է գյուղական

բնակավայրերի մանկապարտեզներում: Հաստատություններից 3-ում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների մինչև 3 խախտումներ, 9-ում՝ 3-ից ավելի խախտումներ:

Մտահոգիչ է այն հանգամանքը, որ բերված իրողությունների պայմաններում 2021 թ. ոլորտին ուղղված պետական փաստացի միջոցները գրանցել են դիտարկվող ժամանակահատվածում ՀՆԱ-ում ունեցած տեսակարար կշռի նվազագույն մակարդակը (տե՛ս Գծանկար 2):



Գծանկար 2. Նախադպրոցական կրթությանն ուղղվող բյուջետային ծախսերի (որպես ՀՆԱ-ի տոկոս) շարժը 2016-2019 թթ.[1]

Չնայած և՛ բյուջեով նախատեսվող, և՛ փաստացի կատարված ծախսումները մինչև 2020 թ. բացարձակ մեծությամբ անընդհատորեն աճել են, սակայն Գծանկար 2-ի տվյալները վկայում են, որ զուգահեռաբար նվազել է ՀՆԱ-ում այդ ծախսերի տեսակարար կշիռը: 2021 թ., երբ նախորդ տարվա համեմատ արձանագրվել է նախադպրոցական կրթության մեջ ընդգրկված երեխաների թվի աճ, միաժամանակ դիտվել է ՀՆԱ-ում ոլորտի փաստացի ֆինանսավորման տեսակարար կռի նվազում: Ավելին, այս ցուցանիշով ՀՀ-ն բավականին զիջում է ՏՀԶԿ երկրների նվազագույն մակարդակին (տե՛ս Գծանակար 1):

Այսպիսի զարգացումները բնականաբար չեն վկայում սոցիալական արդարության մակարդակի հեռանկարային բարելավման մասին: Եթե իրադրությունը վերլուծենք սոցիալական արդարության դասական ընկալման տեսանկյունից, ապա նախադպրոցական կրթության՝ որպես հանրային բարիքի բաշխումը երեխաների ավելի քան երկու երրորդի չընդգրկվածության պայմաններում դժվար է համարել սոցիալապես արդար: Այսպիսի իրավիճակը հղի է սոցիալ-տնտեսական մի շարք անցանկալի հետևանքներով, ինչպիսիք են մարդկային կապիտալի որակի խաթարումը, նախադպրոցական տարիքի երեխաներ ունեցող կանանց՝ սոցիալ-աշխատանքային հարաբերություններում ընդգրկվածության խոչընդոտումը, տարածքային համաչափ զարգացման հետ կապված խնդիրները և այլն, որոնք, իրենց հերթին, պարարտ հող են սոցիալական արդարության հիմնախնդրի արտահայտման մյուս կարևոր պայմանի՝ սոցիալական կոնֆլիկտի դրսևորման համար:

Ելնելով ոլորտում առկա բազմաշերտ խնդիրներից՝ ՀՀ կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագրով (հավելված Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին ՀՀ օրենքի նախագծի) (այսուհետ՝ Ծրագիր) նախատեսվող միջոցառումներից էապես կարևորում ենք 100 և ավելի նախադպրոցական տարիքի երեխա ունեցող

[1] Գծանկարում բերված տվյալները հաշվարկվել են հեղինակների կողմից՝ հիմնվելով ՀՀ Վիճակագրական կոմիտեի տվյալների բազայում ներկայացված ՀՆԱ-ի ցուշանիշների և համապատասխան տարիների ՀՀ Բյուջեի կատարողականում արտացոլված նախադպրոցական կրթությանն ուղղվող բյուջետային ծախսերի տվյալների վրա:

համայնքներում և բնակավայրերում մոդուլային մանկապարտեզների կառուցման, փոքր համայնքներում այլընտրանքային նախադպրոցական ծառայությունների մատուցման (տնային մանկապարտեզ, շարժական ծառայություններ և այլն), ինչպես նաև սոցիալական տարբեր խմբերի՝ նախադպրոցական կրթական ծառայություններում ընդգրկման աջակցության ծրագրերը:

Ծրագրում, ի թիվս ոլորտում առկա խնդիրների, նշվում է նաև, որ նախադպրոցական կրթությունից օգտվողների մեջ խիստ ցածր է 1.5-3 տարեկան երեխաների տեսակարար կշիռը: Նրանց ընդհանուր թիվը 2021 թ. կազմել է 5419 հոգի կամ այս տարիքային խմբի երեխաների ընդհանուր թվի 6.2 տոկոսը: Ըստ այդմ, կարևորվում է նաև վաղ տարիքի նախադպրոցական ծառայությունների զարգացումը՝ ելնելով այն հանգամանքից, որ նախադպրոցական ծառայությունը կրթական արդյունքի վրա առավել մեծ ազդեցություն է ունենում երեք տարի և ավել ընդգրկվածության պարագայում:

Ծրագրով ամրագրվող առաջնայնություն է համարվում մինչև 2030 թ. 3-5 տարեկան երեխաների առնվազն 95 տոկոսի ընդգրկվածության ապահովումը նախադպրոցական ծրագրերում. նախքան դպրոց ընդունվելն առնվազն մեկ տարի երեխան պետք է հաճախի մանկապարտեզ:

Հաշվի առնելով նշված խնդրներն ու դրանցով պայմանավորված նպատակադրումները՝ կարծում ենք, որ դրանց լուծումն ու իրագործումը ենթադրում է ոչ միայն ոլորտին ուղղվող պետական միջոցների բացարձակ մեծության շարունակական աճ, այլև ՀՆԱ-ում դրանց տեսակարար կշռի մեծացում, ինչը խոսուն ցուցիչ է և արտահայտում է ոչ միայն պետական սոցիալական քաղաքականության համատեքստում ոլորտի գերակա կարևորությունը, այլև մեծապես նպաստում է հասարակության շրջանում սոցիալական արդարության մակարդակի բարելավմանն ու կոնֆլիկտայնության նվազեցմանը:

Եզրակացություն

Նախադպրոցական կրթության ոլորտում սոցիալական արդարությունը ենթադրում է առաջին հերթին կրթական այս ծառայության հնարավորինս բարձր հասանելիություն հասարակության բոլոր շերտերի ընտանիքների երեխաների համար՝ անկախ եկամուտներից կամ նրանց էթնիկ, ռասայական, կրոնական և այլ պատկանելությունից: Բազմաթիվ հետազոտությունների արդյունքները վկայում են նախադպրոցական կրթության ընդգրկունության և մարդկային կապիտալի որակի միջև առկա ուժեղ կորելիացիայի մասին: Հետևապես, մրցունակ մարդկային կապիտալի ապահովման տեսանկյունից առանցքային կարևորություն ունեն նախադպրոցական կրթությանն ուղղվող ներդրումներն ու պետական ֆինանսավորման ծավալները: ՀՀ-ում, ի տարբերություն օրինակ ՏՀԶԿ երկրների, նախադպրոցական կրթությանն ուղղվող պետական միջոցների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում բավական ցածր է, ինչն ուղեկցվում է նաև նախադպրոցական կրթության մեջ երեխաների ընդգրկվածության ցածր մակարդակով, ինչն էլ, իր հերթին, էապես խաթարում է ոլորտի սոցիալական արդարությունը:

Այս առումով, կարևորում ենք Կրթության զարգացման մինչև 2030 թ. պետական ծրագրում նախանշված նպատակադրումները, որոնք, սակայն, կարող են կենսունակ լինել ոլորտի ֆինանսավորման շարունակական աճի ապահովման և արդյունավետ վերահսկողական մեխանիզմների ներդրման պայմաններում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գյոզալյան Վարդուշ, *Սոցիալական քաղաքականություն, ուսումնական ձեռնարկ*, Տիր հրատ., Երևան, 2017:

2. *Հաշվետվություն ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների*, https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun_2020_t_tarekan_

3. Хёффе Отфрид, *Справедливость. Философское введение, пер. с. нем.*, Праксис, Москва, 2007.

4. Cunha, F., and Heckman J. “The Technology of Skill Formation.” *American Economic Review 97*, no. 2, 2007, pp. 31–47. https://www.aeaweb.org/articles?id=10.1257/aer.97.2.31.

5. de Brey, C., Snyder T., Zhang A., and Dillow S. 2021. “Digest of Education Statistics 2019.” *National Center for Education Statistics, Institute of Education Sciences, U.S. Department of Education*, 2021. https://nces.ed.gov/pubsearch/pubsinfo.asp?pubid=2021009.

6. Havnes, T., and M. Mogstad. 2011. “No Child Left Behind: Subsidized Child Care and Children’s Long-Run Outcomes.” *American Economic Journal: Economic Policy 3*, no. 2, 2011, pp. 97−129, https://www.aeaweb.org/articles?id=10.1257/pol.3.2.97

7. Herbst, C. “Universal Child Care, Maternal Employment, and Children’s Long-Run Outcomes: Evidence from the U.S. Lanham Act of 1940.” *Journal of Labor Economics 35*, no. 2, 2017, pp. 519−564. https://www.journals.uchicago.edu/doi/full/10.1086/689478.

8. Malik, R., L. Hamm, C. Schochet, S. Novoa, S. Workman, and S. Jessen-Howard. “America’s Child Care Deserts in 2018.” *American Progress, Washington,* 2018, https://www.americanprogress.org/article/americas-child-care-deserts-2018/

9. Merkel, Wolfgang and Heiko, Giebler, “*Measuring Social Justice and Sustainable Governance in the OECD. In Sustainable Governance Indicators 2009: Policy Performance and Executive Capacity in the OECD*”, edited by Bertelsmann Stiftung, 2009.

10.*Social Justice in an Open World: The Role of United Nations, The International Forum of Social Development*, UN, New York, 2006.

WORKS CITED

1. Gyozalyan, Vardush, *Socialakan qaghaqakanut'yun, usumnakan dzer'nark*, Tir hrat., Yerevan,[*Social Policy, Study Guide, Yerevan*] 2017 (In Armenian)

2. *Hashvetvut'yun HH 2020 t'vakani petakan byujei elqayin c'ragreri ev mijocar'umneri gc'ov ardyunqayin (kataroghakan) cucanishneri katarman veraberyal՝ y'st byujetayin hatkacumneri glxavor kargadrichneri* [*Report on the Implementation of the Output Indicators of the RA 2020 State Budget*] (In Armenian)

3. Hjoffe Otfrid, *Spravedlivost'. Filosofskoe vvedenie*, per. s. nem., Praksis, Moskva [*Justice, Philosophical Introduction*, Moscow] 2007 (In Russian)

THE PROBLEM OF SOCIAL JUSTICE IN RA PRE-SCHOOL EDUCATION

SUREN AVETISYAN
Education Inspection Body of the Republlic of Armenia,
General Education, Department, Head
Ph.D. in History, Associate Professor
Yerevan, the Republic of Armenia

VARDUSH GYOZALYAN
Yerevan State University, Chair of Management and Business,
Ph.D. in Economics, Associate Professor,
Yerevan, the Republic of Armenia

The purpose of the analysis carried out within the framework of the article is to highlight the existing problems in the field of preschool education in RA, which are challenging from the point of view of social justice.

The tasks were to present the substantive frameworks of social justice in preschool education, the impact of state funding and investments in the field on the long-term development of society, as well as to identify the main social problems of preschool education in RA.

In the framework of the research, the methods of scientific abstraction and induction, statistical analysis and observation of chronological series, comparative analysis were used. In particular, based on the methodology of calculating the Social Justice Index, we compared the preschool education funding (as a percentage of GDP) of RA and OECD countries as a key indicator of ensuring social justice.

As a result of the research, it became clear that despite the absolute growth of funds allocated to the sector, their weight in the GDP in Armenia is low compared to OECD countries, moreover, it shows decreasing trends.

Eventually, the level of children's involvement in this part of education is very low: about 2/3 of children of the appropriate age are deprived of the opportunity to receive pre-school education, only 6.2 percent of children aged 1.5-3 attend kindergartens, and in rural areas, about ¾ of children are excluded from preschool education.

Therefore, from the point of view of the realization of the principle of social justice, it is very important to continuously increase the relative indicator of funding, aimed first of all at increasing the index of children's enrollment in all directions (territorial, sub-age, etc.).

Keywords: *social justice, preschool education, kindergartens, access to preschool education, public funding of preschool education, social justice index, long-term development.*

ПРОБЛЕМА СОЦИАЛЬНОЙ СПРАВЕДЛИВОСТИ В ОБЛАСТИ ДОШКОЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ РА

СУРЕН АВЕТИСЯН
Глава управления Общего образования Инспекционного органа Образования Республики Армения, кандидат исторических наук, доцент, г. Ереван, Республика Армения

ВАРДУШ ГЁЗАЛЯН
доцент кафедры управления и предпринимательства Ереванского государственного университета, кандидат экономических наук, г. Ереван, Республика Армения

Целью анализа, проведенного в рамках статьи, является выявление проблем в сфере дошкольного образования в РА, важных с точки зрения нарушения социальной справедливости. В рамках исследования были поставлени следующие задачи: определить содержание социальной справедливости в сфере дошкольного образования, изучить влияние инвестиций и государственного финансирования в данной сфере на долгосрочное общественное развитие, а также выявить основные социальные проблемы дошкольного образования в РА.

В исследовании были использованы методы научной абстракции и индукции, статистического анализа и хронологических рядов, сравнительного анализа. В частности, на основе методики расчета Индекса социальной справедливости были сравнены объем финансирования дошкольного образования (в процентах от ВВП) стран ОЭСР и РА как ключевого показателя обеспечения социальной справедливости.

В результате исследования стало ясно, что, несмотря на абсолютный рост средств, направляемых в сферу дошкольного образования, их удельный вес в ВВП Армении невелик по сравнению со странами ОЭСР, более того, имеет тенденцию к снижению.

В итоге очень низок уровень вовлеченности детей в этом звене образования: около 2/3 детей соответствующего возраста лишены возможности получить дошкольное образование, только 6,2% детей в возрасте 1,5-3 лет посещают детские сады, а в сельских районах около ¾ детей исключены из дошкольного образования.

Следовательно, с точки зрения реализации принципа социальной справедливости крайне важен непрерывный рост относительного показателя финансирования, направленный прежде всего на улучшение показателя охвата детей по всем направлениям (территориальным, возрастным и др.).

Ключевые слова: *социальная справедливость, дошкольное образование, дошкольные учреждения, доступность дошкольного образования, государственное финансирование дошкольного образования, индекс социальной справедливости, долгосрочное развитие.*